ՍԻՐԵԼԻ ԵՎ ԱԶՆԻՎ ԲԱՐԵԿԱՄ ԵՐՈՒԱՆԴ ԱԿԻՄՈՎԻՉ ՇԱՀԱԶԻԶԻՆ

Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը այսօր տոնում է Ձեր ծննդյան իննսունամյակը։ Այս ձեռնարկը արդար գնահատականն է Ձեր կյանքի և գործունեության։

Վաթսուն և ավելի տարիներ Դուք անձնուիրաբար նվիրել եք հայ մատաղ սերնդի կրթական և դաստիարակչական գործին, իբրև ուսուցիչ և տեսուչ։ Նույնքան տարի էլ լուիկ-մնջիկ այլ և այլ անհատների ու հաստատությունների արխիվները և վերջերս էլ պետական արխիվն եք քրքրել, փոշիների միջից հանելով ձեռագրեր, որոնք նոր լուսաբանություն են տալիս մեր անցյալ պատմական երևույթների և գրական-պատմական դեմքերի մասին։

Ձեր այս օգտակար և գնահատելի գործունեությունն է, որ արժեքավորվում է այսօր։ Մենք ևս, ձայնակցելով հասարակական գնահատական Ձեռնարկին, շնորհավորում ենք Ձեր իննսունամյակը և որպես հիշատակ նվիրում Ձեզ Ս. Էջմիածնի կողմից հայ ձեռքով գործած հայկական մի գորգ։

Աստուածային օրհնություն ենք հայցում Ձեզ վերա, որ երկարի Ձեր կյանքի արևը և պարգևի Ձեզ նոր ուժ ու նոր եռանդ շարունակելու Ձեր քայլած ուղին հօգուտ հայ գրական կյանքի՝ ձգելով այսուհետև ևս Ձեր լուման հայ գրական գանձարկղը։

ՍԻՐՈ ՈՂՋՈՒՅՆԻՎ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ

ԳԵՎՈՐԳ Զ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Հունվարի 12-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կոնֆերենց-դահլիճում կայացավ հայագիտության ավագ սերնդի ներկայացուցիչներից մեկի, գրականագետ ու պատմաբան, ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Երվանդ Շահազիզի ծննդյան 90-ամյա և գրական-գիտական գործունեության 65-ամյա հոբելյանը։

Ներկա էին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամները, պրոֆեսոր-դոկտորները, գիտական աշխատողները, պատմաբաններն ու գրականագետները և գրասեր հասարակությունը։

Երվանդ Շահազիզի կյանքի ու գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Զարյանը։

Ողջույնի խոսքով հանդես եկան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Ավ. Իսահակյանը, Ա. Տերտերյանը, վաստակավոր ուսուցիչ Սիմակ Սահակյանը, պրոֆ. Հ. Գյուլիքևխյանը, Ս. Երեմյանը և պրոֆ. Ա. Շավարշյանը։ Վերջում ելույթ ունեցավ հոբելյարը։

(«Սով. Հայ.» № 13 (7549), 1946 թ.)